

ԱՆՏԻՊ ԷԶԵՐ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ

95-րդ Պատրիարք Երուսաղէմի

ԱՔՈՆ

Ոչ եւս է բոլորէն սիրուած Աբրահամը, մին Երուսաղէմի Հ. Մ. Ը. Միութեան ուշագրաւ երիտասարդներէն, որուն յիշատակին առջեւ կարելի չէ կենալ առանց ամփոսանք և արցունքի:

Հսկայական ու սաղարթագեղ ծառի մը պէս արմատախիլ ինկաւ՝ խորունկ պարապ մը ձգելով Հ. Մ. Ը. Միութեան երիտասարդութեան և Երուսաղէմի հայութեան իւրաքանչիւր անհատի հոգիին խորը, որովհետեւ հանգուցեալը՝ ո՛չ միայն ծաղիկն էր գաղութին, այլ նաեւ արժանաւոր երիտասարդ մը, որ պատիւ կը բերէր իր ցեղին:

Կեանքի հասկացողութիւնը երկու երես ունի մահուան հանդէպ, կենդանական և մարդկային: Եթէ առաջին հայեցակէտէն նայինք անոր, երկա՛ր ու ձանձրացուցիչ է ան, որովհետեւ ոչինչ կը բերէ մեզի: Իսկ եթէ անոր նայինք մարդկային արժէքներու տեսակէտէն՝ կարճ է ան և աւաղելի, որովհետեւ յաւիտենութեան կը ձգտի նայիլ: Հիմա, որ այլեւս մեր մէջ չունինք Աբոն, մեր միտքը կ'երթայ տարիներուն զորս ան ապրեցաւ մեզի հետ: Հեզ էր ու բարի, բայց հակառակ իր այս խաղաղ բնաւորութեան, ընդվզեցնող երեւոյթներու առջեւ գիտէր սրտմտիլ: Իբրեւ միտք՝ հմտացած էր կանոնաւոր կրթութեամբ, զոր յետոյ այնքան ազդու արդիւնաւորութիւններով պիտի փայլէր, զինք վերածելով փնտռուած ոյժի մը: Իբրեւ կամք, որուն պողպատի ամրութիւն էր հագցուցած, կամաւոր կրուած պարտականութիւններու անխոնջ աշխատաւոր պիտի դառնար, յետոյ իյնալով իր պարտականութիւններու ճամբուն վրայ, հին օրերու պատգամաւորի մը պէս:

Անշուշտ դժուար է հաւատալ ճակատագրուած մեծութիւններու առասպելին, սակայն կարելի չէ չհաւատալ ճիգին, աշխատանքին, ձգտումին և ինքզինք արժեւորելու իտէալին, երբ հոգին և միտքը որդեգրուած ծրագրի մը համաձայն կը տանին կեանքի պայքարը: Այդ տեսակէտով Աբոն նահատակ մը կարելի է նկատել: Ան յաճախ կը մոռնար իր ես-ը, իր պզտիկ մարդը և անոր կապուած նիւթական հանգամանքները, որոնք հասարակ մահկանացուներու բաժինը կը կազմեն: Իր տրտում նայուածքը կը ծանրանար գերագոյն տեսիլքով մը, որ կեանքն ու երազը կը կազմեն մեր ժողովուրդին: Այդ երազն էր, որ թեւ ու թռիչք կու տար իրեն կեանքի բոլոր դժուարութիւններու մէջէն: Տեսիլքէ զուրկ և պարապ հոգիներն են որ հով կ'որսան: Աբոն հովին նետուած խլեակ մը չեղաւ, ան իր հետ կը բերէր մտքի և հոգիի ազնուականութիւն մը, միակ ու ճշմարիտ արժանիքը, առանց որուն մարդիկ գոհհիկ արարածներ կը մնան, նոյնիսկ իրենց ոսկի գէզերուն և փղոսկրեայ գահերուն վրայ:

Ռումանիոյ երբեմնի գրագէտ Թագուհին՝ Քարմէն Սիլվա ըսած է թէ երիտասարդներու մահը կը նմանի նաւաբեկութեան, իսկ մեր ժողովուրդը կ'ըսէ. «Երիտասարդի մը կորուստը կրկնակի մահ է», որովհետեւ իրմով մեր ազգային դրամագլուխէն արժէք մըն է որ կը պակսի:

Սիրելիներու դագաղին առջեւ մահուան անակնկալը դիւրին չի մարսուիր: Մահը՝

մոլթ ուրուականն է կեանքի խնճոյքին, ամպը՝ արեւոտ երկնքին, վիշտը՝ ուրախութեան երգին, երբ մեզմէ բաժնուողը խոստմնալից երիտասարդ մըն է մանաւանդ:

Աբոն կը պատկանէր այսօրուան խոռվայոյզ աշխարհին. սերունդին՝ որ գիտէ իրեններուն տանջանքը: Կրեր է զրկանքներ, քալեր է պատերազմներու սարսափին մէջէն, եղեր է վկան աշխարհներու փլուզումներուն, և հետեւաբար կորսնցուցեր էր վստահութիւնն ու յարգանքը ընկերային կարգերու նկատմամբ: Սակայն հակառակ այս տրտում իրողութիւններուն, ան գիտէր նուիրել իր ոյժն ու խանդավառութիւնը մեծ և գեղեցիկ նպատակներու: Միսթիք էր հոգիով, հազիւ մտածող իր առօրեայ հոգերուն, և այդ սրտագին միսթիսիզմով թաթախուած կը նայէր ապագային:

Կը պատմուի թէ ուսուցիչ մը ամէն առաւօտ երբ դասարան մտնէր, կը խոնարհէր իր աշակերտներու առջեւ: Ան այսպէս կը բացատրէր իր այդ արարքը, թէ վաղը այդ տղաներուն մէջէն պիտի հասնէին կարեւոր դէմքեր, հայրենասէրներ և մեր իրաւունքներու համար պայքարողներ, որոնց առջեւ շատեր պիտի խոնարհէին: Թող Աբոյի դագաղին առջեւ ընենք նոյն խոնարհութիւնը, մտածելով թէ ան խորապէս կը հաւատար մեր ժողովուրդի արդար դատին և մեր իրաւունքներու վերագարծին, հակառակ ժամանակներու թշնամութեան:

Կը հաւատար թէ բռնութեան ասպետները պիտի չկրնան ժողովուրդ մը ոչնչացնել, խլելով հայրենիքը նոյն այդ ժողովուրդէն: Թէ ազգերու կեանքին մէջ յաճախագէտ են այս կարգի աղէտներ, սակայն վտանգը կը մեծնար եթէ անոր յաջորդէր անզգամութիւն և անտարբերութիւն: Բնական մահն է այս, եթէ հոգեկան նոր ոյժեր չբխին իր ընդերքէն և չվերընծիւղեն զինք բողբոջ առ բողբոջ: Հայրենիքը՝ ազգային ուխտի տապանակն է, զոր Իսրայէլացիները իրենց հետ կը փոխադրէին, երբ բռնագրաւուեր էր իրենց հողը: Հայրենիքը՝ ազգային մշակոյթի մագաղաթն է, զոր Հրեաներ իրենց հետ կը տանէին երբ հարկադրուէին գաղթել: Հայրենիքը՝ մեր աւետարաններու կողքի ներսի էջերուն վրայ գրուած պատմական վկայարանն է, մեր ժողովուրդի ողբերն ու երգերը, մեր հերոսներու արեան կաթիլներէն գոյացած ժառանգը, զոր Հայ ժողովուրդը իր գօտին մէջն է խրեր, երբ ցուպը ձեռք առած տարաշխարհներ է գաղթեր:

Սիրելիներ, հողը՝ ոսկի դագաղն է ժողովուրդի մը, որ երիտասարդութիւն չունի: Սակայն հրաշուի երիտասարդութիւն հայոց, մի՛ մոռնար նաեւ ճշմարտութիւնը որ կ'ըսէ թէ իտէալն է միայն, որ կ'ապրեցնէ երիտասարդութիւնը: Երիտասարդ կոչուելու համար պէտք է երիտասարդ ըլլալ հոգիով, զգացումներով, բայց մանաւանդ իտէալի մը շողարձակումներով: Պէտք է զգալ մեր պատմութիւնը իր ետեւը և զայն նորոգելու սրբազան ցանկութիւնը իր աչքերուն առաջ:

Աբոն նուիրեալ աշխատողի մը պատուական յիշատակը թողուց մեզի: Ի՛նչ տխուր բան որ այսքան կանուխ ստիպուած պիտի ըլլայինք խորհելու իր յիշատակի մասին՝ երբ բոլոր անոնք որոնք ճանչցած էին զինք, իր ընկերներէն սկսելով, կը մտածէին այն կարելիութիւններուն՝ որոնք իրմով կրնային պտղաբերիլ: Բան մը կայ կարծէք այս աշխարհին մէջ, որ կը հեզնէ միշտ այն՝ ինչ որ մեզի կը թուի ըլլալ լաւագոյնը և բարին: Սակայն հակառակ այս իրողութեան, կարծէք չենք կրնար հաւատալ, որ այլեւս Աբոն չկայ, թէ մեզի հետ պիտի չըլլայ, մասնակից մեր ուրախութիւններուն և տրտմութիւններուն, որոնք մեր բաժինը կը կազմեն այս աշխարհին մէջ: Թէեւ իր մահով կ'անհետի իր նիւթական գոյութիւնը, սակայն մեր հոգիներուն մէջ կը բացուի իր յիշատակը տրտում և անոյշ երգի մը պէս անվերջանալի:

Յարգանք և արցունք իր յիշատակին: